

ԳԱՐԳԱՐԱՑԻՆԵՐԸ ԸՍՏ ԱՆՏԻԿ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԿՋԵՆԱԴՐՅՈՒՆՆԵՐԻ

Ա. Ն. ԲԱԿՈՅԱՆ

Ստրաբոնը, Աղվանքը նկարագրելուց հետո Հյուսիսային Կովկասի նկարագրությանն անցնելով՝ գրում է. «Ասում են, թե Աղվանքից վերև ընկած լեռներում ապրում են ամազոնուհիները (ալ Ալանի)։ Թեոփանեսը¹, որ մասնակցել է Պոմպեոսի արշավանքին և եղել Աղվանքում, ասում է, որ ամազոնուհիների ու աղվանների միջև ապրում են սկյութ գեղերն ու լեզերը (Երևա շաշու ալ Ալլաշ Նախաշ) և որ այնտեղ հոսում է Մերմադալիս (Եւ Մեջաշալալ) գետը, վերջինների և ամազոնուհիների միջև։ Ուրիշները, այդ թվում Մետրոգորոս Սկեփիացին և Հուսիսկարատեսը², որ նույնպես լավ գիտեն այս տեղերը, ասում են, որ [ամազոնուհիներն] ապրում են զարգարացիների հարևանությամբ (Երջարացու զարցուս), Կովկասյան լեռները հյուսիսային նախալեռներում, որ կոչվում են Կերտունիա. ...գարնանը երկու ամիս [ամազոնուհիները] բարձրանում են հարևան սարը, որը բաժանում է նրանց ու զարգարացիներին։ Ըստ հին սովորության՝ այդ սարն են բարձրանում նաև զարգարացիները՝ համատեղ զոհեր մատուցելու և կանանց հետ կենակցելու՝ սերունդ ունենալու համար»³։

Հիշատակված ցեղերի տեղագրության համար կարևոր են հաջորդ հատվածները. «Մերմոդասը (Ս Մեջաշալալ), ցած հոսելով լեռներից, [անցնում է] ամազոնուհիների երկրով, Սիրակենեով, նրանց միջև ընկած անապատով և թափվում Մեոփտիս» և՝ «Սիրակենեոն ապրում են Ախարդեոն գետի մոտ, որը, հոսելով Կովկասից, թափվում է Մեոփտիս»⁴։ Բերված վկայությունների համադրումը թույլ է տալիս տեղադրել հիշատակված ամազոնուհիներին ու զարգարացիներին Մեոփտիս (Աղովի ծով) թափվող գետերից մեկի վերին հոսանքի շրջանում, Կովկասյան լեռների մոտ։ Աղովի ծով թափվող գետերից Կովկասից է սկսվում և, ի միջի այլոց, ամենաարևելյան ափունքներն ունի Կուրանը, որի հետ էլ, ինչպես երևում է, պետք է համարել Մերմոդասը և Ախարդեոնը⁵։

Մեզ հետաքրքրող հատվածում հիշատակված Կերտունյան լեռների տեղագրությունը կապված է որոշակի դժվարությունների հետ։ Սկզբնապես այդ սնունով էին կոչվում Բալկանյան թերակղզու արևմտյան ափի լեռները⁶, իսկ ավելի ուշ՝ ասիական տարբեր լեռնաշղթաներ։ Պլինիոս Ավագի մի հատվածում Կերտունյան է կոչվում Փոքր Ասիայից մինչև Հիմալայներ ընկած լեռների շղթան։ Ստրաբոնի մի ուրիշ հատվածում և Պոմպոնիոս Մելայի մոտ Կերտունիա է կոչվում Կովկասյան լեռների արևելյան, ծովին հասնող հատվածը. Պտղոմեոսը

¹ Թեոփանես Միթիլենացու մեզ չհասած երկը աղբյուր է հանդիսացել Պոմպեոսի արևելյան արշավանքը նկարագրող հեղինակներին (Պլուտարքոս, Ապիանոս և ուրիշներ)։

² Մետրոգորոսը մ. թ. ա. I դարի I կեսի հեղինակ է՝ վախճանված 71 կամ 69 թ. (հմմտ. Strab. XIII, 1, 55; Plut. Luc. XXII; 2. Մանանդյան. Տիգրան Բ և Հուսիս. Երկեր. հ. Ա, էջ 503—505), իսկ Հյուսիսկարատեսը Հուլիոս Կեսարի ժամանակակիցն է (հմմտ. F. Jacobi. Hypsikrates. PWK, Hb. 17, Stuttgart, 1914, S. 433—434)։

³ Strab. XI, 5, 1. Ընդգծումներն ամենուր մերն են։

⁴ Strab. XI, 5, 2; 5, 8.

⁵ Պտղոմեոսի «Աշխարհագրության» մեջ հիշվում են Մեոփտիս թափվող 7 գետ, որոնց թվում, սակայն, Ախարդեոն չկա, իսկ սիրակենեի մարզն ընկնում է Դոնի ստորին հոսանքի ձախ ափին ապրող յափսամատներից «ներքև» (հաբավ), որ Կովկասից սկիզբ առնող գետ չկա (Ptol. Geogr. V, 8, 2—5, 18)։ Հնարավոր է, սակայն, որ Պտղոմեոսի մոտ Ախարդեոնը կոչվում է այլ անունով, իսկ սիրակենեի տարածքի չհամապատասխանելը արդյունք է այդ փոփոխության ցեղի տեղաշարժի։

⁶ Strab. I, 2, 10; VI, 3, 5 և այլն։

Կերաունյան լեռները տեղադրում է Կովկասի գլխավոր շղթայից հյուսիս-արևելք⁷։ Ստրաբոնի ընդված հատվածի Կերաունիայի հետ համապատասխանում են միայն Պլինիոսի երկի՝ Աղովի ձովի նկարագրության բաժնում հիշատակվող լեռները։ Այդտեղ Պլինիոսը գրում է. «Ոմանք Մենովտիսի շուրջը մինչև Կերաունյա՝ լեռներ տեղադրում են հետևյալ ցեղերին. ափին՝ նապրեր, նրանցից վեր, մինչև Կոլիսերի լեռների գագաթները՝ էսսեդոններ. հետո կամակներ, օրաններ, սուտակներ, մազամակներ... (և այլն. թվարկվում են 30-ից ավելի ցեղեր և 4 գետեր— Ա. 2.)»⁸։ Կասպից ձովին մոտիկ ցեղերին Պլինիոս Ավագը թվարկում է մի ուրիշ հատվածում (VI, 35—39), այնպես որ բնական է ենթադրել, թե հիշատակված Կերաունյան լեռները մոտավորապես համապատասխանում են Աղովի և Կասպից ձովերի ջրբաժանին, կամ նրա մի մասին։ Համարելով այս ենթադրությունը Ստրաբոնի վկայության հետ Կերաունիայի՝ նախալեռներ լինելու մասին, վստահորեն կարող ենք դրանք տեղադրել էլբրոսից մինչև Ստավրպոլիսի բարձրավանդակը ձգվող լեռնաշարի տեղում⁹, որ հաստատում է ամազոնոհիների և դարդարացիների տեղադրությունը Կուբանի վերին հոսանքի շրջանում։

Գարգարացիների նման տեղադրությունը թույլ է տալիս շահագործել այն ուսումնասիրողների հետ, որոնք դարգարացիներին համարում են վինախյան յոդովուրդների՝ շեփերի կամ ինգուշների հետ, քանի որ վերջիններս բնակվում են Կուբանի ավազանից շատ արեւելք։ Այդպիսի համարման համար հիմք է ծառայում այն հանգամանքը, որ XVIII դարից սկսած վկայված է վինախյան «գաղգա» ցեղանունը, որը ներկայումս ինգուշների ինքնանունն է, իսկ «գարգար» բառը վինախյան լեզուներում նշանակում է «աղբակից»¹⁰։ Սակայն, ինչպես իրավացիորեն նշում է ներկա խնդրով մանրամասն զբաղված Ն. Վոլկովան, հարցի լուծման համար ավելի կարևոր է սկզբնաղբյուրներով վկայված տեղադրությունը, քան տերմինների նմանությունը, որ կարող է լինել նաև պատահական։ Նա նշում է նաև, որ լեզվաբանական տեսակետից «գաղգա» և «գարգար» չեն կապվում¹¹։ Սակայն Ն. Վոլկովան առաջարկում է դարգարացիներին համարել դադստանյան յոդովուրդների հետ՝ մատնանշելով, որ հայկական սկզբնաղբյուրները այդ ցեղը տեղադրում են Աղվանքում (որն ընդգրկում էր նաև հարավային 'Բադստանը) և որ ավարներնում, ծախուրներնում ու ութուրներնում «գարգար» («գաղգա») նշանակում է «աղբակն»¹²։ Նման ենթադրությունը թվում է չարգարացի-

⁷ Plin. Nat. Hist. V, 99; Strab. XI, 4, 1; Pomr. Mela. I, 109; III, 39; Ptol. Geogr. V, 8, 15: «Աշխարհացոյց»-ում վերջին Կերաունիան թարգմանված է «Նանթային» (տե՛ս Աշխարհացոյց Մովսեսի հորենացոյց, Յաւելուածովք նախնեաց. Վենետիկ, 1881, էջ 25—26)։

⁸ Plin. Nat. Hist. VI, 20—22.

⁹ Իրոք ուսումնասիրողներ համարում են, թե Ստրաբոնի մեղ հետաքրքրող հատվածի Կերաունիան նույնն է նրա մյուս հատվածի Կերաունիայի հետ (XI, 4, 1), որը, ինչպես ասացինք, Կովկասյան լեռնաշղթայի արևելյան, ձովին հասնող մասն է՝ ընկած Աղվանքի և Սարմատիայի միջև (հմտ. (Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. Ереван, 1971, с. 424; К. В. Тревер. Очерки по истории и культуре Кавказской Албании. М.—Л., 1959, с. 48—49, 194; К. Алпеев. К вопросу об источниках Страбона в описании древней Албании.— Доклады АН Азерб. ССР, 1960, 4, с. 421)։ Նման ենթադրությունը պետք է համարել չարգարացված, քանի որ Ստրաբոնը ուղղակիորեն տարբերակում է երկու Կերաունիաները՝ մեկը հիմնով Կասպից ձովի, մյուսը՝ Մենովտիսի մոտերքը. մեկը համարելով Կովկասի գլխավոր շղթայի մասը, մյուսը՝ հյուսիսային նախալեռներ (xi ὑψηλοί)։

¹⁰ П. К. Услар. Этнография Кавказа. Языкознание. Т. 2, Чеченский язык. Тифлис, 1886, с. 166; Kiessling. Gargareis. PWK, Hb. 13, Stuttgart. 1910, . 758; Е. И. Крупнов. Древняя история Северного Кавказа. М., 1960, с. 70—72, 74; У. С. Ырбеджан. «Աշխարհացոյցի» սկզբնական բնագրի վերականգնման փորձ.— «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 2, էջ 266, ծան. 51

¹¹ Н. В. Волкова. Этнонимы и племенные названия Северного Кавказа. М., 1973, с. 152—153.

¹² Նույն տեղում, էջ 153.

ված, քանի որ, ինչպես տեսանք, Մետրոդորոսի, Հյուսիսկրատեսի և Ստրաբոնի տեղեկությունները թելադրում են զարգարացիներին տեղադրել ոչ թե Դադստանում, այլ Հյուսիսային Կովկասի արևմտյան կեսում: Միաժամանակ պետք է նշել, որ հունա-հռոմեական սկզբնաղբյուրներում պարունակվում են տեղեկություններ, ըստ որոնց զարգարացիներին, իսկ ավելի շատ՝ նրանց հարևան ամազոնուհիներին, պետք է տեղադրել մոտավորապես Դադստանի տարածքում (ն. Վուկովան լի նշում դրանք): Սակայն այդ տեղեկությունները արդյունք են մի թյուրիմացության, որը հանգում է դեռևս Թեոփանես Միթիլենացուն և զարգարներին գելերի ու լեգերի հետ շփոթելու հետևանք է:

Վերը բերված հատվածում Ստրաբոնը հղում էր Թեոփանեսին, երբ գրում էր գելերի ու լեգերի հետ ամազոնուհիների հարևանության մասին: Նույնը հայտնում է նաև Պլուտարքոսը, որը ևս օգտվել է Թեոփանես Միթիլենացու երկից: Նկարագրելով Պոմպեոսի բանակի հաղթանակը աղվանների դեմ Աբանտես (Ալավան) գետի մոտ, Պլուտարքոսը գրում է. «Ամազոնուհիները բնակվում են Կովկասի [լեռների] Հիբկանյան ծովին հարող [հատվածում], բայց ոչ աղվանների հարևանությամբ, որովհետև նրանց միջև ապրում են գելերն ու լեգերը (Γέλαται καὶ Λέγες): Վերջիններիս հետ ամազոնուհիներն անցկացնում են ամեն տարի երկու ամիս՝ հավաքվելով Թերմոդոնտ գետի մոտ, որից հետո հեռանում են և աչքում իրենց կյանքով¹³, ինչպես տեսնում ենք, Պլուտարքոսի մոտ գելերն ու լեգերը ոչ միայն ամազոնուհիների հարևաններն են (զարգարների փոխարեն), այլև այն ցեղերը, որոնց հետ կապվում է ամազոնուհիների տարօրինակ սովորույթը: Ուշագրավ է նաև Թերմոդոնտ գետի անունը, որն իրականում գտնվում էր Սև ծովի հարավային ափին, Թեմիսկլուրայի դաշտում, ուր, ըստ հունական ավանդության, ամազոնուհիների բնակավայրն էր¹⁴: Պարզ է, որ կանացի այդ ցեղին Թեմիսկլուրիայից Հյուսիսային Կովկաս տեղափոխելով, անտիկ ավանդույթը տեղափոխել էր նաև հին բնակավայրի որոշ աշխարհագրական անուններ: Այլի է ընկնում նաև Մերմոդաս և Մերմադալիս անունների նմանությունը Թերմոդոնտ անվանը. ինչպես երևում է, առաջինները վերջինի լուկ աղավաղված ձևերն են: Վերջապես, պետք է նշել, որ ամազոնուհիների և հարևան ցեղի միջև տեղի ունեցող ամենամյա երկու ամիս տևող հանդիպումների մասին պատմում են միայն Մետրոդորոսը և Հյուսիսկրատեսը (Ստրաբոնի մոտ) և Թեոփանեսը (Ստրաբոնի և Պլուտարքոսի մոտ). անտիկ մյուս հեղինակները ամազոնուհիների մասին ուրիշ բովանդակության առասպելներ են պատմում: Այս բոլորը ցույց է տալիս, որ Թեոփանեսը ուղղակիորեն օգտվել է իրենից մի քանի տասնամյակ առաջ ստեղծագործած Մետրոդորոսի երկից (նշենք, որ Միթիլենես և Սկեփսիս քաղաքներն էլ հարևան են):

Թվում է, կարելի է նաև ենթադրել, թե ի՞նչ պատճառով է Թեոփանեսը Մետրոդորոսի ամազոնուհիներին տեղափոխել Հյուսիսային Կովկասի արևմտյան կեսից արևելյանը և դրել գելերի ու լեգերի կողքին: Ըստ Միթիլենացու՝ Աբանտեսի ճակատամարտին մասնակցել են նաև ամազոնուհիները: Այդ մասին Պլուտարքոսի մոտ կարդում ենք. «Ասում են, որ այդ ճակատամարտում բարբարոսներին օգնում էին նաև ամազոնուհիները, որ իջել էին Թերմոդոնտ գետի մոտի լեռներից: Որովհետև ճակատամարտից հետո հռոմեացիները մեռած բարբարոսների վրայից գեմֆեռը հանելիս, գտնում էին ամազոնական կաշվե վահաններ և կիսաճորակոշիկներ, բայց կանացի ոչ մի դիակ չտեսան»¹⁵: Ընդգծված մանրամասները ցույց են տալիս, որ մարտում ոչ մի ամազոնուհի էլ չի եղել, և այն կարծիքը, թե ռալմադաշտում մնացած անսովոր զենքն ու հանդերձանքը պատկանել է ամազոնուհիներին, արդյունք է կանացի այդ ցեղի մասին առասպելներով ցնորված հռոմեացի զինվորների ենթադրության: Մեղ համար, սակայն, կարևորն այն է, որ հռոմեացիները, նրանց թվում և Թեոփանեսը, այդպես մտածել են: Այսպիսով, Մետրոդորոսի պատմությունից ամազոնուհիներին հանաչող Թեոփանեսը, ենթադրելով կանանց՝ աղվաններին օգնության գալը, ենթադրում է նաև նրանց՝ իրար հարևան լի-

¹³ Plut. Pomp. XXXV.

¹⁴ Այդ մասին մանրամասն՝ ստորև:

¹⁵ Plut. Pomp. XXXV. Ապիանոսը (Mithr. 103). որի աղբյուրը ևս Թեոփանեսն է, գրում է, թե հռոմեացիները գերիների ու սպանվածների մեջ տեսան շատ կանանց և որոշեցին, թե դրանք ամազոնուհիներ են: Սակայն հաշվի առնելով Պլուտարքոսի ուղղակի վկայությունը կանացի զինակներ չգտնելու մասին, պետք է մտածել, որ ընդգծվածը Ապիանոսի հնարածն է:

նելը: Սակայն իմանալով, որ աղվաններից այն կողմ ապրում են զեյերն ու լեզերը¹⁶, Միթի- չենացին ամազոնուհիներին տեղադրում է վերջիններից անմիջապես հետո:

Պետք է մտածել, որ Թեոփանեսի յլուրիմացությունն են հանգում նաև անտիկ այն հե- ղինականների տեղեկությունները, ըստ որոնց ամազոնուհիներն ապրում են աղվանների հարե- յվանությունում: Օրինակ, Հուստինոսը (մ. թ. III դար), որը համառոտել է մ. թ. ա. I դարի վեր- ջի—մ. թ. I դարի սկզբի հելլենակ Պոմպոս Տրոգոսի պատմական երկը, գրում է. «Աղվան- ների հարեանությունը ապրում են ամազոնուհիները, որոնց Թալստրիա թագուհին, շատ հե- ղինականների վկայությամբ, խնդրեց Ալեքսանդրին (Մակեդոնացին է—Ա. Հ.) սիրային կապի մասին»¹⁷: Թեոփանեսին հանգող ավանդույթը մտնում է նաև վաղ քրիստոնեական դրակա- նություն մեջ: Այսպես, մ. թ. III դարի սկզբի հելլենակ Հիպոլիտես Հռոմեացին (Փորթացին) Հաբեթի: ցեղերի երկրները թվարկելիս Աղվանքի կողքին հիշում է «Ամազոնիա» երկիրը¹⁸: Հե- տաքրոր է, որ Հարեթից սերված ժողովուրդների մեջ էլ Հիպոլիտեսը նշում է ինչ-որ դար- զանների. «Սլանք ևն Հարեթի ցեղերը... մարեր, աղվաններ, զաբգաններ, երբայներ, հայեր, ամազոններ, կուլեր, կորգեններ, ղեննագներ, կապագովկացիներ...»¹⁹: Հնարավոր է, որ հի- շատակյան «Մաշգաշ»-ը Վիրքի անվան աղավաղված ձևն է. Վիրք-Իբերիան սկզբնաղբյուր- ներում հայտնի է նաև Հիրկանիա-Գուրգան անունով²⁰, որը նման է «Գարգանին»: Սակայն հասկանալի է թվում, որ Վիրքը Հիպոլիտեսի հետագա երկու հատվածներում (Ստատա- կալիստիկոնից հետո բաժանված 72 լեզուների թվարկման մեջ և անծանոթ ժողովուրդների նկարագրության բաժնում) հանդես է գալիս Մաշգաշ ձևով²¹: Վերջին անվան բացակայությունը Հարեթի ցեղաբանության բաժնի բերված երկու հատվածներում թույլ է տալիս ենթադրել, թե ինչ-որ յլուրիմացության պատճառով Վիրքն իսկապես դուրս է մնացել այդ բաժնից²²: Այս դեպքում գուցե «Մաշգաշ»-ը ոչ թե Վիրքն է, այլ ամազոնուհիների հարեան դարգարացիների անվան աղավաղված ձևը: Եթե նման ենթադրությունը ճիշտ է, ապա կարելի է արձանագրել, որ Թեոփանեսին հանգող ավանդույթը ոչ միայն ամազոնուհիներին տարել է արևելք, դրել զեյերի ու լեզերի կողքին և վերջիններին վերագրել դարգարացիների հետ կապված տարօրի- նակ սովորույթի պատմությունը (Թեոփանես, Պուտարքոս), այլև հետագայում անվանա- փոխել է զեյերին ու լեզերին դարգարների (Հիպոլիտես): Ընդ որում պետք է նշել, որ Հիպո- լիտեսը երկը մեն տարածում գտավ քրիստոնեական աշխարհում: Նրա մեզ հետաքրքրող տե- ղեկությունները կրկնում են Նիսեբիոս Կեսարացին և Բյուզանդական որոշ պատմիչներ, հայ

¹⁶ Գեյերի ու լեզերի պատմականությունը հաստատվում է ինչպես լեզերի հավաստի հա- մալրություն մ հայկական ու վրացական աղբյուրներից հայտնի զեյերի (լեկերի)—լեզերների հետ, այնպես էլ Պտղոմեոսի մոտ Աղվանքի արևելյան ծովափին Γεργα ցեղի, Γεργα գետի և Γεργα քաղաքի հիշատակումով (Ptol. Geogr. V, 8, 23; 11, 2): Ընդ որում Թեոփանեսը պիտի իմանար պատմական զեյերի ու լեզերի գոյության մասին, քանի որ Պոմպոսի հետ թա- փանցել էր Աղվանքի արևելյան, ծովափնյա մարզը, Հմմտ. Plut. Pomp. XXXVI; Plin. Nat. Hist. VI, 51: Ավրելիոս Վիկտորը Հռոմի նշանավոր ալեքի մասին, 76 (տե՛ս В. В. Латышев. Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе. Т. 2, СПб, 1904—1906, с. 317).

¹⁷ Just. XLII, 3, 7.

¹⁸ Hipp. Chr. 84 (Hippolytus Werke, B. 4. Die Chronik, Hergestellt von A. Bauer. Berlin, 1955, S. 15).

¹⁹ Hipp. Chr. 79, S. 14.

²⁰ J. Marquart. Eranšahr nach der Geographie des Ps. Moses Xorenazi. Ber- lin, 1901, S. 115.

²¹ Hipp. Chr. 199, S. 32; 232, S. 39.

²² Այս կարծիքն է նաև Կ. Կեկելիձեի, Հմմտ. К. Кекелидзе. Идея братства за- кавказских народов по генеалогической схеме грузинского историка XI века Леонтия Мровели.—«ეტიუდები ძველი ქართული ლიტერატურის ისტორიიდან», III, თბ., 1955, გვ. 99

հեղինակներից Փիլոն Տիրակացին, նրանից վերցնելով՝ Մ. Կաղանկատվացին, Ուխտանեսուր և ուրիշներ²³։

Մական կասկածելի է ոչ միայն գաղափարների այս կամ այն տեղադրությունը Հյուսիսային Կովկասում, այլև ընդհանրապես նրանց գոյությունն այդտեղ։ Միակ պատմությունը, ուր հիշվում է այս ցեղանունը, վերաբերում է ամազոնուհիների առասպելական ժողովրդին²⁴։ Հնագույն հույների կարծիքով միաստիք, ռազմասեր կանանց այդ ցեղը ընկնում էր էգեյան ծովի ափին՝ Տրովադայում և ավելի հարավ²⁵։ Ավելի ուշ հունական ավանդույթը ամազոնուհիների բնակության տարածքը դնում է Թեմիսկլուրայի դաշտում, Թերմոդոնտ գետի ափին (նեքլայիս Թերմե-շայը), Սև ծովի հարավային ափին²⁶։ Տեղափոխության պատճառն, ըստ երևույթի, այն էր, որ Տրովադայում հույները (թերևս, Տրոյական պատերազմի ժամանակ) ամազոնուհիներ շտեպան։ Նույն պատճառով մոտավորապես մ. թ. ա. V դարում կանայք տեղափոխվում են Պոնտոսի հեռավոր անկյունը՝ Մեովտիսի արևելյան ափերը²⁷։ Ծանոթանալով այս տարածքին, հույներն այստեղ էլ շտեպան միաստիք այդ կանանց, ուստի վերջիններս տեղափոխվեցին ավելի արևելք՝ Հյուսիսային Կովկասի խորքերը։ Ըստ Մետրոդորոս Սկեփսիացու և Հյուսիսիկրատեսի՝ նրանք բնակվում էին Կուբանի վերին հոսանքի շրջաններում, իսկ ըստ Պոմպոնիուս Մելայի և Պլինիոս Ավագի՝ Կասպից ծովի Հյուսիս-արևմտյան ափերին²⁸։ Պտղոմեոսը ամազոնուհիներին տեղադրում է ավելի հյուսիս՝ իր Հիպոկիական («Աշխարհացոյց»-ում՝ «Ձիական») լեռների և Ռա գետի (Վոլգա) միջև²⁹։ Հույները ենթադրում էին ամազոնուհիների գոյությունը նաև Միջին Ասիայում և Աֆրիկայում³⁰։

Ժամանակակից պատմագրության մեջ ամազոնուհիների առասպելական լինելը կասկածի առարկա չէ³¹։ Մ. Կոսովներ ի մի է բերել աշխարհի տարբեր ժողովուրդների մոտ հանդիպող նմանատիպ առասպելները և ցույց տվել, որ վերջիններս տարածված են ամբողջ աշխարհում՝ Ճապոնիայից մինչև Ամերիկա³²։ Հատկանշական է, որ անգամ անտիկ որոշ հեղինակներ, թեպետև ավանդույթի ճնշման տակ պատմում են ամազոնուհիների առասպելները, միաժամանակ

²³ Стр. В. В. Латышев. *Изд. ашх.*, 4. 1, էջ 667, 707—708; Ա. Գ. Աբրահամյան. Անանիա Շիրակացու մատենագրությունը. Երևան, 1944, էջ 360; Մովսեսի Կաղանկատուացուց Պատմություն Աղուանից աշխարհի, ի լույս ընծայեաց Մ. Էմին. Մոսկվա, 1860 (այսուհետև՝ ԱՊ), 1, Բ—Գ, էջ 4—5; Ուխտանեսուր և պիսկոպոս. Պատմություն Հայոց. Վաղարշապատ, 1871, 1, Ժ, էջ 23։

²⁴ Գաղափարներին հիշատակող ուշ շրջանի հեղինակները (Ստեփանոս Բյուզանդացի, Եվստատիոս Թեսալոնիկացի) միայն կրկնում են Ստրաբոնի տեղեկությունները (հմտ. В. В. Латышев. *Изд. ашх.*, 4. 1, էջ 257, 310)։

²⁵ Այս տեղադրության մասին հայտնում է Ստրաբոնը՝ հղելով մ. թ. ա. IV դարի հեղինակ Եվստատիոսը (Strab. XII, 3, 21—24; XIII, 4, 6; XIV, 1—4. հմտ. Theophr. Amazones. PWK, Hb. 2, Stuttgart, 1894, S. 1757—1758)։

²⁶ Hom. II. III, 189; VI, 185; Her. IV, 110; Eur. Heraclid. 408—415; Apoll. Rhod. II, 990—993; Plut. Thes. XXVI—XXVII Diog. II, 45—46; Strab. I, 3, 7; II, 4, 24 ets.; Just. II, 4, 24; Pomp. Mela. I, 105; Dion. Perieges, Vv. 772—774; App. Mithr. 69, 78.

²⁷ Her. IV, 110—117; Aesch. Prom. 416—419, 723—725; Ps. Hippocr. De aere, 24; Plat. Nom. 804—806; Ps. Scyl. 70; Ps. Scymn. 875; Dion. Perieges, Vv. 655—657.

²⁸ Strab. XI, 5, 1—2; Pomp. Mela, I, 12; III, 39; Plin. Nat. Hist. VI, 35.

²⁹ Ptol. Geogr. V, 8, 20. Զարմանալի է, որ «Աշխարհացոյց»-ում «Ամազոնք» ունեն այլ տեղադրություն՝ Շանթային լեռների (Կերասունյան) և Կասպից ծովի միջև (հմտ. Աշխարհացոյց Մովսեսի խորհնացույց, էջ 26)։

³⁰ Diod. III 52—55; Curt. VI, 5, 24—32.

³¹ А. А. Тахо-Годи. Амазонки. «Мифы народов мира (энциклопедия)», т. 1, М., 1980, с. 63—64; Theophr. *Изд. ашх.*, էջ 1754 և հտ.

³² М. О. Косвен. Амазонки. История легенды.—«Советская этнография», 1947, № 2—3.

Հայտնում են իրենց կասկածը նրանց իրական լինելու մասին, կամ էլ մտածում, թե կանանց այդ ցեղը վաղուց վերացած պիտի լինի՞ս:

Նշված հանգամանքները հաշվի առնելով՝ բնական է ենթադրել, թե զարգարացիները նույնքան առասպելական են, ինչքան ամազոնուհիները: Նրանց պատմականությունը պնդող ուսումնասիրողները, ըստ երևույթին, ենթադրում են, թե զարգարացիները Հյուսիսային Կովկասի մի ուրույն ցեղ են եղել, որոնց հետ հունական ավանդույթը կապել է առասպելական ամազոնուհիներին: Սակայն Ստրաբոնի հաղորդած մանրամասնությունները թույլ են տալիս մերժել նման ենթադրությունը: Վերը բերված հատվածների կողքին Ստրաբոնը գրում է. «Ասում են, թե զարգարացիները այս օտերեն են եկել Թեմիսկլուրայից, ամազոնուհիների հետ, հետո բաժանվելով նրանցից, կովել են նրանց հետ ինչ-որ բնակացիների ու էվբեացիների օգնությամբ, որ այստեղ են ընկել թափառումներում, այնուհետև ավարտելով պատերազմը նրանց հետ, պայմանագիր են կնքել վերը բերված պայմանով, այնպես որ միայն երեսներն են ընդհանուր, իսկ ապրում են մեկը մյուսից առանձին» (XI, 5, 2): Ընդգծված առաջին հատվածն ուղղակի վկայում է, որ Հյուսիսային Կովկասում զարգարացիները եկվոր էին: Երկրորդ ընդգծված հատվածում թրակացիների ու էվբեացիների հիշատակությունը ցույց է տալիս, որ ամազոնա-զարգարական այս պատերազմը պիտի տեղի ունեցած լիներ, զոհե տեղեկության սկզբնաղբյուրի հեղինակի պատկերացմամբ՝ ծովափի որևէ հատվածում և ոչ թե Կուբանի վերին հովտում: Անկասկած, էվբեացիներն ու թրակացիները հունական գաղութարարներ էին, իսկ վերջիններս շրջում էին միայն ծովափերով՝ իսկապես խառնվելով տեղական ժողովուրդների՝ դործերին՝ փնտրելով բնակության համար լավագույն պայմաններ, սակայն չառաջանալով ցամաքի խորքը՝³⁴ Ընդ որում Ստրաբոնի բացատրությունը, թե նրանք հայտնվել էին այնտեղ թափառումներում, ինչպես երևում է, լոկ ենթադրություն է և իրեն էլ կասկածելի թվացած և երևույթը (ցամաքի խորքը թափանցելը) բացատրելու փորձ: Վերջապես, զարգարացիների անունը իր պուգահեուն է դրնում Տրովադայի Գարգար լեռան և քաղաքի անունների մեջ՝³⁵ Այս բոլորը ցույց են տալիս, որ զարգարացիները ամազոնուհիների առասպելի մեջ են մտնողով վերջինիս դոլություն դնում վաղ շրջանում: Ուստի Հյուսիսային Կովկասում պատմական զարգարացիներ տեսնելը պետք է համարել չարդարացված:

Հայկական աղբյուրներից զարգարացիներին այս կամ այն ձևով հիշատակում են Մովսես խորենացին, Թովմա Արծրունին, Մովսես Կաղանկատվացին, Ուխտանեսը, Ասողիկը և Վառդան Արևելցին:

Նորենային իր «Հայոց պատմություն» մեջ երեք անգամ է գործածում այդ անունը. Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան կողմնակալ նշանակված Առանից սերված է համարում, ի թիվս այլոց, «Գարգարացուց» իշխանությունը. Հայոց Տրդատ III արքան հյուսիսային լեռնականների դեմ կռվելու համար իջնում է «Գարգարացուց» դաշտը. Մաշտոցը գնում է Աղվանք և նշանագրեր ստեղծում «Կոկորդասոս, աղխադուր, խժական, ինքրեկագունին այնորիկ Գարգարացուց լեզուին»:

³³ Հմմտ. Strab. XI, 5, 3—4; Arr. Anab. VII, 13, 2—6; Just. II, 4, 32.

³⁴ Ս. Պետրոսյանը նկատում է, որ էվբեացիները հայտնի են նաև «աբանտներ» անունով և, ենթադրելով, թե սկզբնապես եղած «աբանտցիները» Ստրաբոնն է դարձրել «էվբեացիներ»։ Համարում է, թե խոսքը Սյունիքի ու Արցախի Հաբանդ գավառների բնակչության մասին է եղել (Ս. Պետրոսյան. Մերձսևանյան ցեղերի միությունը հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (մ. թ. ա. VI—V դդ.). «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 1, էջ 195)։ Թրակացիներին նա համարում է Սևանի ավազանում բնակված թրակա-կիմերական ցեղերի հետ, զարգարացիներին՝ ինդուշների, իսկ ամազոնուհիներին՝ Ալալան գետի հովտի բնակչության հետ։ Սակայն, ինչքան էլ սրամիտ լինեն նման համադրությունները, հեղինակի հետ համաձայնելը դժվար է թեկուզ այն պատճառով միայն, որ անհնար է պատկերացնել ամազոնա-զարգարական իրականում ներցեղային պատերազմի այդքան լայն (Սյունիքից մինչև Հյուսիսային Կովկաս) ռազմարեմը։

³⁵ Hom. II, VIII. 48; Strab. II, 2, 33; XIII, 1, 5; 51; 56; 58; 62; Plin. Nat. Hist. V, 122.

Գարգարացիների իշխանությունը հիշատակվում է Վաղարշակ արքայի կողմից հայ նախարարությունների հաստատման պատմության հատվածում: Պատմահայրը գրում է. «Յետ սորա մեծ և անուանի և բազմաբիւր զարեւից հիւսիսոյ կողման կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի և յամենայն գործ մտաւորութեան և հանճարոյ առաջին, զԱռան. առ մեծ գետովն, որ հատանէ զղաշտն մեծ, որ անուանի Կուր: ... Ի սորա զաւակաց ասեն սերեալ զազգն Ուտէացոց և Գարգմանացոց և Սաւղէացոց և Գարգարացոց իշխանութիւնսն»³⁶:

Առան նախահոր կողմնակալությունը, ըստ հորենացու տվյալների, ընդգրկում էր Հայոց Լուսիւ և Արցախ աշխարհները, ուստի որոշ իմաստով իրավացի են ուսումնասիրողները, երբ զարգարացիների իշխանությունը փնտրում են այս տարածքում՝ Կուրից հարավ: Սակայն ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ այդ իշխանությունը չգիտեն «Գահնամակը», «Զարանամակը» և հայկական մյուս աղբյուրները (Կաղանկատվացին, Ասողիկը և Վարդանը միայն կոկնում են պատմահոր տեղեկությունը³⁷): Միևնույն ժամանակ, Առանից սերված համարվող մյուս նախարարությունները՝ Ուտեացիները, Գարգմանացիները և Սավղեացիները շատ լավ հայտնի են ուրիշ աղբյուրներից: Փարձելով պարզել նման հակասության պատճառը, դեռևս 1910 թ. Հ. Համբարյանը հայտնի է այն կարծիքը, թե Խորենացու այս «զարգարացիները» նույնն են Ազաթանգեղոսի «զարգարացիների»՝ հետ, որոնք, իրականում, «զուգարացիների» գրչական աղավաղումն են: Հ. Համբարյանը գրում է. «Այս Գարգարացիք աղավաղումը Ազաթանգեղեայ մէջ շատ հին է, այնպէս որ Խորենացին իւր օրինակին մէջ այնպէս կարդացաւ: է, որ եւ պատճառ տուած է պատմադրին հին Հայաստանի մէջ այդպիսի նախարարութիւն մը ենթադրելու եւ մտացածին երեւակայութեամբ անոնց ծագման համար գրոյց մը յօրինելու, սերեցնելով զանոնք Առան անուն նախարարէ մը»³⁸: Նման տեսակետը լիովին հաստատվում է Ազաթանգեղոսի գրչագրերի ու տարբերակների քննությամբ:

Ազաթանգեղոսի բնական հրատարակության մեջ օգտագործված ձեռագրերի I և II խմբերում (ընդամենը 3-ն են) «Գուգարացոց» ձևի փոխարեն առկա է «Գարգարացոց» ընթերցումը³⁹: Ընդ որում, հրատարակիչները պնդում են, որ ձեռագրերի II խումբը հանդիսանում է մյուս երկու խմբերի մայրը, իսկ III խմբի մայր գրչագիրը ստեղծվել է բնագրի որոշ սխալներ ուղղելու նկատառումով⁴⁰: Հենվելով այս պնդումների վրա՝ կարող ենք անգամ ենթադրել, թե III խմբի ձեռագրերի «Գուգարացոց» ձևը ընթերցումը ուղղման արդյունք է, իսկ հայերեն Ազաթանգեղոսի նախօրինակը⁴¹ ունեցել է «Գարգարացոց» ընթերցումը: Վերջին ձևն առկա է նաև Ազաթանգեղոսի հունարեն թարգմանության մեղ հասած բոլոր ձեռագրերում⁴²: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ պատմականորեն ճիշտ ընթերցվածքը «Գուգարացոցն» է. դա երևում է ինչպես Գուգարաց բառի իշխան ալ աղբյուրներից լավ հայտնի

36 Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց. Տիգրիս, 1913, II, Ը, էջ 113:

37 ԱՊ, I, Գ, էջ 7: Սանկիսոսի Տարօնեցույ Ասողկան Պատմութիւն Տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885, I, Ե, էջ 34—35: Վարդան. Պատմութիւն Տիեզերական. Մոսկվա, 1861, էջ 30:

38 Հ. Համբարյան. Գարգարացիք. Թե՞ Գուգարացիք. «Հանդես ամսօրյա», 1910, էջ 242:

39 Ազաթանգեղեայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց. Տիգրիս, 1909, էջ 414, 10-րդ տողի ծանոթությունը (§ 795):

40 Նույն տեղում, էջ ԽԳ—ԽԴ:

41 Այն կապված է համարվում V դարի կեսերին: Հմմտ. Ազաթանգեղոս. Պատմութիւն Հայոց, աշխարհաբար թարգմանություն ներածականով ու ծանոթություններով Ա. Տեր-Ղևոնդյանի. Երևան, 1977, էջ 13:

42 Տե՛ս G. Lafontaine. La version grecque ancienne du livre arménien d'Agathange (édition critique). Louvain, 1973, p. 304 (§ 135): «ο γροσς ἀρχων τῆς Γαργαριανῶν γῆρας...». Հունարեն թարգմանությունը կատարվել է VI դարի II կեսին (հմմտ. նշվ. աշխ., էջ 39—43; П. М. Мурадян. Кавказский культурный мир и культ Григория Просветителя.—Кавказ и Византия. Вып. 3. Ереван, 1982, с. 13 և ալլն):

լինելուց, այնպես էլ Ագաթանգեղոսի պատմության «Գրիգորի վարք» անունով հայտնի ավելի հին տարրերակում այդ ընթերցման առկայությունից⁴³:

Այսպիսով, կարող ենք համոզված պնդել, որ Խորենացին, լավ իմանալով Գուգարաց բրդեշխության մասին և Ագաթանգեղոսի պրագմատիկ հանդիպելով Գարգարացիների իշխանությանը, վերջինս դրել է առաջինի կողմին և սովել նրան ինքնուրույն գոյություն: Քե ինչու է Խորենացու մոտ այդ իշխանությունը տեղադրվում Հայաստանի Հյուսիս-արևելյան կողմում (և սերում այնտեղի կողմնակալ Առանից), նույնպես երևում է Ագաթանգեղոսի տվյալներից: Վերջինս հիշատակում է Գուգարաց բրդեշխությունը (առանց անունը տալու) մի երկրորդ հատվածում, գրելով. «...և ի դինուորական կողմանէն՝ դորեմին գահերեցան իւրոյ տաճարին, որ բրդեշխը կոչին... դորորդն ի Մասթաց կողմանէն (հունարենում՝ Μασαγγοτων (Μασαγγοτων)»⁴⁴: Մասթաց կամ հոների կողմի տակ պատմահայրը իրավա-ցիորեն հասկացել է Ուտիքն ու Արցախը, ուստի և տեղադրել Գարգարացիների իշխանությունն այդ տարածքում⁴⁵:

Գարգարացիների անվան հաշորդ հիշատակությունը հանդիպում է «Հայոց պատմության» Տրդատ III թագավորի մասին պատմող հատվածում: Խորենացին գրում է. «...պարապ առեալ խորհրդոց Շապուհ՝ նիւթէ շարիս ի վերայ մերոյ աշխարհիս, թովեալ դհիսիսայինսն ամենայն ելանել ի Հայս՝ ժամ դնէ և իւր գալ Արեօք ի միւս կողմանէն: ...և այն ինչ ընդհուպ եկեալ մեծին Տրդատայ յարեմտից և լուեալ զայս ամենայն, և դիտացեալ, թէ ոչ ի ժամադրութիւն եկն Շապուհ՝ խաղալ ի վերայ հիւսիսականացն: ...Իսկ թագաւորն Տրդատ ամենայն Հայաստանօր իջեալ ի դաշտն Գարգարացոց՝ պատահէ հիւսիսականացն ճակատու պատերազմի...»: Այնուհետև պատմվում է, որ Տրդատը ջախջախեց հյուսիսականներին, բռնեց մինչև հոների աշխարհը, ապա պատանդներ վերցրեց ու, միարանելով նրանց, շատ զորք հանեց և արշավեց Պարսկաստան⁴⁶:

Ժամանակին Մ. Բարխուդարյանը ենթադրել է, թե հիշատակված Գարգարացիների դաշտը համապատասխանում է Կուրի աջ վտակ Կարկար գետի հովտին՝ ելնելով անունների նմանություններից: Նա այդ տարածքում՝ Միլիի դաշտում է տեղադրում նաև գարգարացիների իշխանությունը և նույն անունով այն ժողովրդին, որի համար Մաշտոցը նշանադրեր ստեղծեց⁴⁷: Այս ենթադրություններն ընդունել են Ս. Տ. Երեմյանը, Վ. Ֆ. Մինորսկին, Կ. Վ. Տրեբերը և ուրիշներ⁴⁸: Սակայն Բ. Ուլուբաբյանը իրավացիորեն կասկածի տակ է առնում լոկ տերմին-

⁴³ G. Garitte. Documents pour l'étude du livre d'Agathange. Rome, 1946, p. 304: «ο οε ογθωας ἡγεμων των Γουγαρων χωρας...». Հունարեն և արաբերեն թարգմանություններով հայտնի այս «վարքի» հայերեն բնօրինակը կազմված է համարվում V դարի I կեսին (հմտ. Ա. Տ. Եր-Ղ. և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 13):

⁴⁴ Ագաթանգեղոսի Պատմութիւն Հայոց, էջ 459—460, § 373: G. Lafontaine, նշվ. աշխ., էջ 336, § 164.

⁴⁵ Բ. Ուլուբաբյանը փոխում է Խորենացու բնագրի «գարգարացիները», «գուգարացիները», համարելով, ըստ երևույթին, թե առաջինը գրչական սխալի արդյունք է (Բ. Ուլուբաբյան. «Աղվանք», «Ալբանիա» և «Առան» տեղանունները.— «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 3, էջ 121, ծան. 36: Նույնի՝ Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության (V—VII դդ.), Երևան, 1981, էջ 48: Նման ենթադրությունը թվում է շարգարացված, քանի որ նույն հատվածում (II, Ը, էջ 113—114) Խորենացին առանձին գրում է նաև Գուգարաց բրդեշխության մասին:

⁴⁶ Նույն աշխ., II, 2Դ—2Ե, էջ 227, 228, 230: Խորենացու այս տեղեկությունը կրկնում են Կաղանկատվացին (I, ԺԲ), Ուստանեսը (I, ԿԸ, էջ 96), Ասողիկը (II, Ա, էջ 62) և Վարդանը (էջ 40):

⁴⁷ Մ. Բարխուդարյան. Արցախ. Բաբու, 1895, էջ 6—7: Նույնի՝ Պատմութիւն Աղուանից. հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 18:

⁴⁸ Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի. Երևան, 1963, էջ 46: К. В. Тревер, նշվ. աշխ., էջ 48—49, 66, 308; В. Ф. Минорский. История Ширвана и Дербента X—XI веков. М., 1963, с. 28. Ս. Պետրոսյան. «Գարգարացոց» դաշտի տեղադրությունը.— ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1976, № 7, էջ 75:

ների նմանության վրա հիմնված այս վարկածի ճշմարտացիությունը: Նա նշում է, որ «կար-
լառ» հայերեն բառ է՝ բարբարոս տարածք նշանակությամբ⁴⁹: Հայկազյան բառարանի հե-
ղինակները բացատրում են «կարկառ» որպես «բար ի բարի վերայ կուտեալ կամ կառոյց
բարանց» և բերում այդ բառի օգտագործման բազմաթիվ օրինակներ «Աստվածաշնչի» հայե-
րեն թարգմանությունից և ուրիշ աղբյուրներից⁵⁰: Հր. Աճառյանը կապում է այն «կառ»-
«կանգնեցնել, շինել, հաստատել» արմատի հետ⁵¹: Ըստ Ն. Մառի՝ հայերեն «կարկառից» են-
փոխառած վրացերեն «կարկարի» — «բարձր ժայռ, վախճ լեռան» կամ «կարկալի» — «բարերի-
կալյո» բառերը⁵²: Գաբգարացիների և Կարկառ գետի անունների կապը կասկածի տակ է առ-
նում նաև այն հանգամանքը, որ Կարկառ անունով տեղանուններ հայտնի են նաև Հայկական
լեռնաշխարհի ուրիշ շրջաններում: Ղ. Ալիշանի և Ս. Էփրեկյանի հայտնի երկերում Կարկառ
գետից բացի հիշատակված են Կարկառ դավառակը Մոկսում, Կարկառ բերդաբաղաբը Մոկս-
ում և: Կարկառ (Գեոգրաֆիկ) գյուղը Լոռիում⁵³: Մատթեոս Ուռհայեցին, Սմբատը, Վարդան
Առևելցին և Միքայել Ասորին բազմիցս հիշատակում են Կարկառ ամրոցը նիբաուրի աջ ափին՝
Սասնոսատից հյուսիս-արևելք⁵⁴: Վերջապես, դարաբաղյան Կարկառը սկզբնաղբյուրներում վը-
կալված է դեռևս XIII դարում: Կիրակոս Գանձակեցին գրում է. «Եւ ետ ի նա (մոնղոլները՝
Հասան Հալալ խաչենցուն—Ա. Հ.) զհայրենիս իւր զՊարաբերդ և զԱկանայ և զԿարկառ...»,
իսկ նույն դարի մի անանուն վրաց հեղինակ հայտնում է, թե արշավանքներից մեկի ժամա-
նակ վրացական ջոկատն անցավ Գեղականով (Գեղաբունիք), խաչիանով (խաչեն), և Կարկ-
ալի մարդով մինչև Բալկուն (Բալլական)⁵⁵: Այս հիշատակությունների մեջ մեզ համար կարևո-
րոր «Կարկառ» («Կարկրի») ձևի առկայությունն է, փոխանակ, ապենք՝ «Գարգարի» («Գարգ-
րի»), որը էապացուցեր Մ. Բարխուդարյանին հանգող վարկածը: Այս բոլորը ցույց է տալիս,
որ «Հարգարացիներ» և «Կարկառ» անունների նմանությունը, ամենայն հավանականությամբ,
սրատահան է:

Փորձելով հիմնավորել «Գարգարացուց» դաշտի միլիական տեղադրությունը, ուսումնա-
սիրողներից Ս. Պետրոսյանն անում է մի շարք ենթադրություններ, որոնց քննությունը պետք
է կատարել ավելի մանրամասն: Հետևելով Գր. խալաթյանցին, Մ. Արտամոնովին և Ստ. Մալ-
խոսյանցին՝ Ս. Պետրոսյանը համարում է հյուսիսականների դեմ Տրդատ III-ի՝ խորհնացու
հիշատակած պատերազմը մ. թ. 72 թ. ալանների ներխուժման հետ⁵⁶: Ուսումնասիրողը իրա-

⁴⁹ Բ. Ուրուբաբյան. Հայոց լեզվի հյուսիս-արևելյան ելքի և հարակից հարթերի
նախն. ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1968, № 1, էջ 55—60: Նույնի՝ Դավազնի Հայոց
Արևելից կողմանց պատմության, էջ 25—26: Կարկառ գետանունը նույն կերպ են ստուգաբա-
նում նաև Կ. Գանը (Опыт объяснения Кавказских географических названий. СМОЛСК,
40, Тип. 1909, отд. 3, ч. 3, с. 36) և Հյուբշմանը (Հին հայոց տեղույ անունները. Վիեննա
1997, էջ 362):

⁵⁰ Նոր բառգիրք հայկազան լեզուի. հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 1071:

⁵¹ Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. Բ, Երևան, 1973, էջ 527—
528, 554:

⁵² Նույն տեղում, էջ 554:

⁵³ Ղ. Ալիշան. Տեղագիր Հայոց Մեծաց. Վենետիկ, 1855, էջ 43, 54: Զ. Ս. Էփրեկյ-
ան. Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան. հ. Բ, գիրք Ա, Վենետիկ, 1907, էջ 325—326:

⁵⁴ Մատթեոս Ուռհայեցի. Ժամանակագրութիւն. Վաղարշապատ, 1898, էջ 142,
260, 336, 353, 359: Սմբատյան Սպարապետի Տարեգիրք. Վենետիկ, 1956, էջ 105, 152, 155,
160, 167: Վարդան, էջ 155: Ժամանակագրութիւն տեառն Սիսականի Ասորոց պատրիարքի.
Յերուսաղէմ, 1871, էջ 423:

⁵⁵ Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի-
երևան, 1961, գլ. ԾԵ, էջ 359: История и восхваление венценосцев. Пер. К. С. Кекелидзе.
Тбилиси, 1954, с. 54—55. Զմմտ. Լ. Մելիքյան-Բեկ. Վրաց աղբյուրները Հայաստանի և
հայերի մասին. հ. Բ, Երևան, 1936, էջ 14:

⁵⁶ Ս. Պետրոսյան. «Գարգարացուց» դաշտի տեղադրությունը, էջ 66—67: Զմմտ.
Г. Халатянц. Армянский эпос в «Истории Армении» Моисея Хоренского. М., 1896,
с. 242—244: Մովսես Խորենացի. Պատմություն հայոց. Թարգմանությունը, ներածու-
թյունը և ծանոթությունները Ստ. Մալխասյանցի. Երևան, 1968, էջ 357—358: М. А. Арутю-
нов. Очерки древнейшей истории хазар. Л., 1936, с. 121—122: Ս. Պետրոսյանը հիշատա-

վաղիորեն ենթադրում է, որ ալանները պիտի եկած լինեին ոչ թե Միջին Ասիայից, ինչպես բավականին հստակ դժուար է նրանց ուղին Հովսեպոս Փլավիոսը (Հիրկանիա—Գեղուկի լեռնանցք—Մարաստան—Հայաստան)⁵⁷, այլ Հյուսիսային Կովկասից, քանի որ իր իսկ՝ Հովսեպոսի վկայությամբ՝ ալաններն ապրում էին Տանայիսի և Մեոփտիսի մոտերքը։ Ժամանակին Հ. Սանադրյանը ենթադրել է, որ ալաններն անցել են Դարչսյով՝ համաձայնության գալով զրաք թագավորի հետ⁵⁸։ Վերջը իրանական աղբյուրներում կոչվում է Վարջան կամ Դուրդան (արաբերեն՝ Զուրդան)⁵⁹, և վերջին անվան նմանությունը Գուրգանի (Հիրկանիա) հետ կարող էր լինել Հովսեպոսի մոտ Հիրկանիայի թագավորի հիշատակության պատճառը։ Ս. Պետրոսյանը ենթադրում է ալանների արշավանքի և վերադարձի այլ ուղի՝ Դերբենդի անցքով։ Նա համարում է Հովսեպոսի Հիրկանիան Կասպքի (Փայտակարան աշխարհ) հետ, որը, իբրև թե, բնակեցված էր Հիրկանիայից բերված ցեղերով և, ըստ հորենացու մի տեղեկության (II, ԾԳ)՝ ապստամբել էր հայոց Արտաշես (Տրդատ I) թագավորի դեմ⁶⁰։ Ս. Պետրոսյանը գտնում է, որ Ստաստանը թալանելուց հետո ալանները ցանկացել են վերադառնալ Հյուսիսային Կովկաս նույն ճանապարհով, և այս ետդարձի ճանապարհին է, որ նրանց վրա հարձակվել է հայոց Տրդատ թագավորը։ Նա համարում է, որ ալանների ետդարձի ճանապարհը պիտի ընկներ Արդարի—Դերբենդ՝ միջնադարում լավ հայտնի առևտրական ուղիով, որն անցնում էր Վարդանակիրսով, Բայլականով, Շամախիով և Շապուրանով։ Այս ուղու վրա Հայաստանի մոտ էր գտնվում Բայլականի շրջանը, ուրեմն այստեղ էլ պիտի տեղի ունեցած լինեի ճակատամարտը հայոց և ալանաց զորքերի միջև։ Եվ քանի որ նույն դեպքերն էլ արտացոլում, ըստ Ս. Պետրոսյանի, հորենացու տեղեկությունը Տրդատ III-ի՝ «Գարգարացուց» դաշտ իջնելու և հյուսիսայինների դեմ կովկասյան մասին, ուստի «Գարգարացուց» դաշտը անհրաժեշտ է տեղադրել Բայլականի շուրջը, այսինքն՝ Միլիի դաշտում⁶¹։

Ս. Պետրոսյանի փաստարկումները ալանների 72 թ. արշավանքի Դերբենդով անցնելու մասին թվում են անհամոզիչ։ Մասնավորապես, արդարացված չէ Հովսեպոսի հիշատակած Հիրկանիայի համադրությունը Կասպք-Փայտակարանի հետ։ Միևնույն ժամանակ, Հ. Մանանդյանի ենթադրությունը, որը Հիրկանիան համարում է Գուրգան-Վիրթի հետ, թվում է միակ ընդունելին։

Սորենացու համապատասխան հատվածի քննությունը թույլ է տալիս չհամաձայնել նաև ալանների արշավանքի հետ Տրդատ III-ի պատերազմի համադրության հետ։ Սորենացու և Հովսեպոսի պատմությունների նմանությունը չնչին է։ Եթե, ըստ Հովսեպոսի, ալանները հաղթում են Տրդատին և ասպատակում Հայաստանը, ապա, ըստ Սորենացու՝ Տրդատը ջախջախում է իշնամիներին և հալածում մինչև հոների աշխարհը։ Պատմահայրը բոլորովին չի խոսում Հյուսիսականների ոչ միայն Մարաստան, այլև Հայաստան ներխուժելու մասին⁶²։ Երկու պատմությունների միակ նմանությունը կայանում է Տրդատ I-ի ու Տրդատ III-ի և հակառակորդների միջև անձնական մենամարտերում վերջինների կողմից պարանը առաջինների վրդ պցելու փաստի կրկնության մեջ։ Տրդատ I-ը (երա հակառակորդը հասարակ գինվոր է) հաղթիվ կարողանում է սրով կտրել պարանը և փրկվել մահից։ Այնինչ Տրդատ III-ը (երա հակառակորդը բասիլենի թագավորն է) ձգում է պարանը և մոտ քաշելով թշնամուն՝ սրահարում նրան։ Թվում է, թե այդքան տարբերությունների մեջ միմիայն պարանի օգտագործման կրկն-

կում է նաև Ն. Ադոնցի, Հ. Մանանդյանի և Մ. Արեղյանի աշխատությունները, սակայն դրանցում նման համադրության մասին խոսք չկա։

⁵⁷ Joseph. Bel. Iud. VII, 7, 4. Հետևելով Հովսեպոսին՝ ալանների ուղին այսպես է դժուար նաև Թ. Մոմզենը (Römische Geschichte. B. V. Berlin, 1886, S. 394).

⁵⁸ Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. Երկեր. հ. Բ, Երևան, 1978, էջ 14։

⁵⁹ Հմմտ. J. Marquart. Կշվ. աշխ., էջ 115։

⁶⁰ Ս. Պետրոսյան. Փայտակարանը և Պարսպատունիքը մ. թ. I դարի երրորդ քառորդում. «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 2, էջ 172—173։

⁶¹ Ս. Պետրոսյան. «Գարգարացուց» դաշտի տեղադրությունը, էջ 69—70։

⁶² Հյուսիսից կատաված ուրիշ արշավանքներ նկարագրելիս Սորենացին հատուկ նշում է իշնամիների Հայաստան ներխուժելը, մասնավոր՝ Կուր գետն անցնելը (Հմմտ. II, Ծ, էջ 177, II, Կն, էջ 200)։

ստեղծ ղեկնապետության կոկորդախոս աղխազուր խժական խեցեբեկագունին այնուրիկ Գարգարաց-
ուոց լեզուի⁶⁸:

Որոշ ուսումնասիրողներ համարում են, թե այս հատվածի «Գարգարացուցն» էլ վերա-
բերում է Կուրի աշափնյա տարածքին⁶⁹, Սակայն նման կարծիքը հենվում է այն հնացած տե-
սույթի վրա, որտեղից Ուտիք և Արցախ աշխարհները անջատվել են Մեծ Հայքից վերջինիս
387 թ. բաժանման ժամանակ: Մինչդեռ համեմատաբար վերջերս Բ. Ուլուբաբյանը և Բ. Հա-
րությունյանը⁷⁰ հենվելով սկզբնաղբյուրների աներկմիտ վկայությունների վրա, ցույց տվեցին,
որ Ուտիքի և Արցախի անջատումը Մեծ Հայքից կատարվել է 428 թ. ոչ վաղ 70: Մաշտոցն այ-
ցիկ է Աղվանք 428-ից առաջ, հայոց Արտաշես վերջին թագավորի օրոք, ուստի կասկածից
վեր է, որ նա գործել է Կուրից հյուսիս:

Հետաքրքիր է, որ խորենացին հայտնում է Մաշտոցի անգրկության Աղվանք (Կապադակ-
յա յարաբարում) «իջնելու» մասին: Ընդ որում, եթե պատմահոր մոտ Մաշտոցը վերջից է
Աղվանք (Կապադակյա յարաբարում) «իջնում», ապա Կորյունը գրում է նրա՝ հայոց միջ-
նաշխարհից Աղվանք «իջնելու» մասին. «Եւ ապա յետ այնորիկ (Բյուզանդիայից վերադառ-
նալուց հետո—Ա. Հ.) հրաժարեալ զնալ ի կողմանս Աղուանից: Եւ երթեալ իջանէր յաշխարհս
է: Կասեալ ի թագաւորական տեղիսն...»: Ինչպիս տեսնում ենք, «իջնել» բայն օգտագործվում
է ոչ թե բարձր տարածքից ցածր տարածք անցնելու, այլ հարևան երկիրը, մարդը գնալու մա-
սին⁷²: Հետևապես, անառարկելի չէ Ս. Պետրոսյանի պնդումը, թե «իջնել» բայի օգտագործումը
խոսում է «Գարգարացուց» լեզվի կրողների միլիական տեղադրության մասին, բանի որ Միլիի
դաշտը ցածր է ընկած հարևան շրջաններից⁷³: Այս հանգամանքը մեզ համար կրկնակի կարևոր

⁶⁸ Խ ու ռ ե ն ա ջ ի, III, ԾԴ, էջ 329: Այս տեղեկությունը կրկնում են Մ. Կաղանկատվա-
ցին (II, 3) և Ստ. Սրբելյանը (ԺԵ, էջ 39):

⁶⁹ Ս. Բ ա ռ խ ու ռ ա ռ յ ա ն ղ. Արցախ, էջ 6—7: Ս. Ս. Ե ռ ե մ յ ա ն, նշվ. աշխ., էջ 46:
К. В. Тревер, նշվ. աշխ., էջ 49, 305: Ս. Պ ե տ ռ ո ս յ ա ն. «Գարգարացուց» դաշտի տե-
ղադրությունը, էջ 74—75:

⁷⁰ Բ. Ու լ ու բ ա բ յ ա ն. Հյուսիս-արևելյան Հայաստանի նախամարզալանական շրջանի
վարա-բարաբարական վիճակի հարցի շուրջը. «Բանբեր երևանի համալսարանի», 1975, № 2:
Բ. Հ ա ռ խ ու ռ յ ա ն ղ, նշվ. աշխ. ն ու յ ն ի. Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елише.—«Кавказ и Византия»,
вып. I, Ереван, 1979.

⁷¹ Կ ո ռ յ ու ն. Վարդ Մաշտոցի. ԺԷ, էջ 118:

⁷² Այս իմաստը լավ երևում է նաև ուրիշ ենթատեքստերում: Այսպես. «Աստվածաշնչի»
հայերեն թարգմանություն մեջ երկու դեպքում «իջանել» թարգմանված հունարեն «βύβαν»
«գնալ», «գալ» (Գործք, ԺԵ, 30, ԺԹ, 1) և վեց դեպքում՝ «βύβαν»՝ «իջնել», «գնալ»,
«գալ» (Ղուկ., Դ, 31, Գործք, ԺԲ, 19, ԺԳ, 4, ԺԵ, 1, ԺԸ, 5, ԻԱ, 3), ընդ որում, ենթատեքս-
տից երևում է, որ վերջին դեպքում էլ իմաստը գնալն է, և ոչ թե բարձրից ցածր իջնելը: Օրի-
նակ. «Իբրև իջին (αὐτὸς) ի Մակեդոնիայ Շիդա և Տիմոթեոս...» (Գործք, ԺԸ, 5) կամ՝
«Եւ ոմանք իջեալ ի Հրէաստանէ, ուսուցանէին զեղբարս» (Գործք. ԺԵ, 1): «Իջնելու» հիմնա-
կան իմաստը չի կարող լինել ոչ առաջին դեպքում, որովհետև Մակեդոնիան հարևան շրջ-
աններից բարձր ընկած լեռնային երկիր է, ոչ էլ երկրորդ դեպքում, որովհետև Հուդայի հա-
րևան երկրներից շատերը, ուր քարոզելու էին գնացել քրիստոնյաները, բարձր էին ընկած
Հրեաստանից: Երկա խնդրի առիթով արժեքավոր կոնսուլտացիայի համար մեր երախտագի-
տությունն ենք հայտնում Ա. Կոստանյանին):

⁷³ Ս. Պ ե տ ռ ո ս յ ա ն. «Գարգարացուց» դաշտի տեղադրությունը, էջ 75: Նույն հատ-
վածում (էջ 74) Ս. Պետրոսյանը պնդում է, թե Մաշտոցը գործել է Աղվանքի մայրաքաղաքում,
որը 388 թ. հետո Փայտակարան քաղաքն էր Միլիի դաշտում (Բայլական—Օրեն—Կալայի տե-
ղում): Անհրաժեշտ է նշել, սակայն, որ Փայտակարանի՝ Աղվանքի մայրաքաղաք լինելու տե-
սակետը (Ս. Ս. Ե ռ ե մ յ ա ն, նշվ. աշխ., էջ 88: К. В. Тревер, նշվ. աշխ., էջ 188—197:
Հ. Ն վ ա ղ յ ա ն. Աղվանից թագավորության Արշակունյաց ճյուղի սկզբնավորումը. «Բանբեր
Հայաստանի արխիվներ», 1977, № 5) հիմնվում է Մովսես Խորենացու տեղեկությունները ը-
հասկացած և խառնած ուշ շրջանի հեղինակների (Կաղանկատվացի, Գանձակեցի) տվյալներ
վրա: Հերքվում է աղբյուրագիտական մանրակրկիտ քննությունը: Տե՛ս Բ. Հ ա ռ խ ու ռ յ ա ն-

է, որովհետեւ Տրդատ III-ի մասին պատմող հատվածում էլ ասվում է «Գարգարացւոց» դաշտը «իջնելու» մասին, և եթե «իջնել» ունենաւ միայն ցածրանալու իմաստ, ապա «ցածր» բնկած դաշտի տակ բնական կլինէր ենթադրել Կուրի պես մեծ գետի նախ և առաջ աջափնիս՝ «բարձր» լեռներին անմիջապէս հարող դաշտավայրը:

Խորենացու բերված վերջին վկայութիւնը ուսումնասիրողները հասկացել են այնպես, թէ գարգարացիները աղվանական ցեղերից մեկն են, և հենց նրանց լեզվի համար էր Մաշտոցը նշանագրեր ստեղծել⁷⁴: Ելնելով Մաշտոցի կատարած ընտրութիւնից, գարգարացիներին համարում են Ստրաբոնի հիշատակած 26 աղվանական ցեղերից «առավել կուտուրականը և առաջատարը»⁷⁵:

Սակայն գարգարացիներին աղվանական ցեղերից մեկը համարելու վարկածը կասկածելի է թվում: Եթե այդպես լինէր, ապա սպասելի էր դրա արձանագրումը անտիկ և հայկական ուրիշ աղբյուրներում: Մինչդեռ տեսանք, որ անտիկ սկզբնաղբյուրներում գարգարացիները առասպելական ցեղի անուն է ինչ-որ տեղ փոքր Ասիայում կամ Հյուսիսային Կովկասում՝ Աղվանքի սահմաններից հեռու, իսկ հայ հեղինակներից նրանց գիտի միայն Խորենացին: Աղվանական ցեղերից գլխավորին պիտի իմանար գոնե Կաղանկատվացին՝ «Աղվանից պատմութիւն» հեղինակը: Այնինչ, նա միայն կրկնում է Խորենացու տեղեկութիւնները «Գարգարացւոց» իշխանութիւն, դաշտի և լեզվի մասին⁷⁶: Միևնույն ժամանակ, «Աղվանից պատմութիւն» մեջ պատկանված VII դարի մի աղբյուր⁷⁷ Աղվանքում Մաշտոցի գործունեութիւն մասին հայտնում է աղվանական, սակայն մեղ համար շատ կարևոր հետևյալ տեղեկութիւնը. «և ձգէր (Մաշտոցը—Ա. Հ.) զբարոզութիւն անտարանին յաշխարհն Ուտիացւոց, և յԱղուանս և ի Լիւիինս և ի Կասպս և ի Դուռն Զորայ և յայլ ազգի ազգիսն, զորս գնուրեամբն էր տնեալ Աղեմանդի Մակնդնացոյ և նստուցեալ զմեծ լեռամբն Կովկասու. զԴարգառս և զԿամիսիկ շնիւրաղսս. դարձուցեալ ի հաւատս՝ զկարգ աստուածապաշտութեան ուսուցանէր...»⁷⁸: Ինչպես տեսնում ենք, զարգարներն այստեղ համարվում են հյուսիսկովկասյան այն ցեղերից մեկը, որոնց «նստեցրել էր» Ալեքսանդր Մակեդոնացին: Քրիստոնեական և մահմեդական գրականութիւն մեջ լայնորեն տարածված էր այն ավանդութիւնը, ըստ որի Ալեքսանդրը հավաքել է աշխարհի 22 բարբարոս ցեղերին, քշել հյուսիս՝ Կովկասյան լեռների Կասպիական կողմած դռներից այն կողմ և փակել այդ լեռնանցքը երկաթե դարուսանիքով: Այս ավանդութիւնը պատմող վաղ շրջանի հեղինակները (Հովսեփոս, Կեղծ Կայիսթենես) Կասպիական դռների տակ հասկանում էին Գեղուկի լեռնանցքը էլլուրսի լեռներում⁷⁹: Ուշ շրջանում, վաղ քրիստոնեական և, մասնավորապէս, հայկական գրականութիւն մեջ Կասպիական դռների տակ հասկացվում է Դեր-

յան. Մաղթաց Սանեսան թագավորի արշավանքը Հայաստան. ՀՄՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. դիտ.», 1981, № 6: Նույնի՝ Փայտակարան քաղաքը և նրա տեղադրութիւնը. նույն տեղում, 1981, № 12:

⁷⁴ Բացառութիւն է կաղմում միայն Ն. Ակինյանը, որն ընդհանրապէս մերժում է աղվանների համար դիր ստեղծելը (հմտ. Ն. Ակինյան. Ս. Մաշտոց վարդապետ. Վիեննա, 1949, էջ 295—328):

⁷⁵ К. В. Тревер, նշվ. աշխ., էջ 49:

⁷⁶ ԱՊ, I, Դ, ԺԲ, II, Գ:

⁷⁷ Այդ աղբյուրն ընդգրկում է ԱՊ, I գրքի Իէ—Լ և II գրքի ԺԸ—Խն գլուխները (ոմանք սխալմամբ մտցնում են նաև I, Ժէ—ն) և ուսումնասիրողների կողմից անվանվում է «Ջվանշիրի պատմութիւն», «Միհրանյանների ժամանակագրութիւն» և այլն (հմտ. Ն. Աղոնց. Քննութիւն Մովսէս Կաղանկատվացու. «Անահիտ», 1939, № 3, էջ 77: Ն. Ակինյան. Մովսէս Դաստուրացի (կոչված Կաղանկատվացի) և իր Պատմութիւն Աղուանից. Վիեննա, 1970, էջ 240—242: К. А. Каграманян. Источники «Истории страны Агванк» (Автореф. канд. дисс.). Ереван, 1973, с. 18—19.

⁷⁸ ԱՊ, I, Իէ, էջ 70:

⁷⁹ Joseph. Bel. Iud. VII, 7, 4: Պատմութիւն Աղեքսանդրի, էջ 109, 110, 140: Ալեքսանդրի ուղեկիցները Կովկաս էին անվանել նաև Կասպից ծովի հարավային ափերից մինչև Հիմալայներ ձգող լեռների շղթան (Strab. XI, 5, 5):

քննդի լեռնանցքը⁸⁰։ Նրա հետ էլ կապվում է Ալեքսանդրի դրած երկաթե դարպասների պատմությունը⁸¹։ Քրիստոնեական և մահմեդական երկրներում այդ պատմության հետ միացվեց Գոգի և Մագոգի մասին հինկտականության առասպելը, ըստ որի՝ հյուսիսի այդ բարբարոս ցեղերը պիտի դուրս գան և կործանեն քաղաքակրթությունը⁸²։ Պահպանվել են երկաթե դարպասներից այն կողմ փակված ցեղերի մի շարք թվարկումներ⁸³ (թվարկվող ցեղանունները տարբեր աղբյուրներում տարբեր են, ընդ որում, շատ քիչ զուգահեռներ են գտնում հավաստի ցեղանունների հետ և մեծ մասամբ առասպելական են ու հնարված)։ Այդ թվարկումների մեջ ամենուր առաջինը հիշվում է Գոգը։

«Աղվանից պատմության» վերջ բերված հատվածում դարդարների հիշատակումը Ալեքսանդրի «նստեցրած» ցեղերի թվում (ընդ որում՝ առաջին տեղում) ցույց է տալիս, որ հայկական քրիստոնեական ավանդույթը հակում է ունեցել, ըստ երևույթին, անտիկ և վաղ-քրիստոնեական դրականությունից (Հիպոդիտես?) որպես Հյուսիսային Կովկասի մի ցեղ հայտնի դարդարներին համարել հյուսիսի բարբարոս ժողովուրդներից մեկը և, թերևս, համադրել (հնչյունական փոքր նմանություն հիման վրա) Գոգի հետ։ Այսպիսով, «Աղվանից պատմության» VII դարի աղբյուրում «Գարգարը» տեղմինն օգտագործվել է ոչ թե որպես հավաստի ցեղանուն, այլ որպես արհամարհական, քամահարական (պեյորատիվ) անուն՝ նշանակելու հյուսիսի բարբարոս ցեղերին։ Նույն իմաստով է օգտագործված այդ աղբյուրում նաև «Հեթթաղը» տեղմինը, որն իրականում միջինասիական քուշանների անունն է և Հյուսիսային Կովկասի հետ որևէ կապ չունի։

Քննարկված հանգամանքները թույլ են տալիս ենթադրել, որ խորհնացու մոտ ևս «Գարգարացուց» տեղմինը օգտագործվում է քամահարական, պեյորատիվ իմաստով և նշանակում է ոչ թե աղվանից ցեղերից մեկին, այլ բուն Աղվանքի և նրանից արևելք ընկած տարածքի բնակչությունն ընդհանրապես։ Ուրիշ հատվածներում պատմահայրը կոչում է այդ բնակչությունը «հիսիսականը», «լեռնոտենայը» կամ, ուղղակի, «բարբարոսը»⁸⁴։ Նշված իմաստը ավելի պարզորոշ երևում է խորհնացու երկրի այն հատվածում, ուր պատմվում է, թե Մաշտոցը Աղվանքում նշանադրեր ստեղծեց «կոկորդախօս», աղիազուր, խժական, խեցրեկազունին այլևուրիշ Դարգաբանուց լեզուին»։ Դժվար չէ տեսնել, որ «Գարգարացուց» այստեղ մի հինգերորդ պեյորատիվ էպիտետ է աղվանների այն («այնորիկ») լեզվի նախորդ շորս բացասական էպիտետների կողքին (դրանցից մեկը՝ «խժականն», ի միջի այլոց, նույնպես պեյորատիվ ստուգաբանություն ունեցող բառ է)։ Եթե ճիշտ է այս ենթադրությունը, ապա «Գարգարացուց» դաշտի տակ էլ պետք է հասկանալ Կուրի ձախափնյա ամբողջ աղվանական դաշտային մասը և ոչ թե նրա որևէ մի հատվածը։

⁸⁰ Hipp. Chr. 229, S. 39; Eus. Chr. p. 190։ Փիլոն Տիրակացի (Ա. Աբրահամյան, Նշվ. աշխ., էջ 364)։ Խորենացի, II, 22, էջ 234։ Արժրունի, IV, Գ, էջ 284։ Առաքել Գեղեցի, 842, էջ 439։ Lafontaine, Նշվ. աշխ., էջ 323, § 152 (հայերեն և հունարեն որոշ ձևազրկեր «մինչ ի սահմանս Կասպից»-ի փոխարեն ունեն «մինչև ի դրունս Կադրից» — γὰρ πρὸς Καδρυ)։

⁸¹ Ուրիշ հեղինակներ երկաթե դարպասները դնում են նաև Դարյալում (Procop. Pers. I, 10։ Աշխարհացուց Վարդանյա վարդապետի, աշխատաշարությունը Զ. Պերպերեանի Բարիդ, 1960, էջ 9։ Ժամանակագրություն տեառն Միխայելի Ասորուց պատրիարքի. Յերուսաղեմ, 1871, էջ 388)։

⁸² Եղեկ, I, 2, 18, 19, 1 և այլն։ Ալեքսանդրի երկաթե դարպասների առասպելի մասին մանրամասն տե՛ս A. R. Anderson, Alexander's Gate, Gog and Magog and the Inclosed Nations. Cambridge, Massachusetts, 1932; Н. В. Пигулевская. «Железные ворота» Александра Македонского.—Сб. «Исследования по истории и культуре народов Востока», М.—Л., 1960, с. 423—426; Յ. Տաշեան. Ուսումնասիրություն մոտեն-Վալիսթենայ վարուց Աղեքսանդրի. Վիեննա, 1982, էջ 169—177։

⁸³ Յ. Տաշեան, Նշվ. աշխ., էջ 170—171։ Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմություն տանն Սիսական. Մոսկվա, 1861, էջ 112։

⁸⁴ Խորենացի, II, 22, էջ 227—228, II, 25, էջ 230, III, Գ, էջ 259, III, Թ, էջ 266։

